Մխիթար Սեբաստացի կրթահամալիր

Նախընտրական ծրագիր

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի
կառավարման խորհրդի ընտրություններ
2025 թվական, փետրվարի 10–14

Թեկնածու՝ Դավիթ Մուրադյան

«Հանուն կրթահամալիրի, հանուն պետության»

Երևան 2025

Բովանդակություն

Նախաբանի փոխարեն 3
Ա. Կրթահամալիրի ընդհանուր կառավարում 5
Բ. Կրթական միջավայրի զարգացում 7
Գ. Սկզբունքներ և առաջնահերթություններ 9

Նախաբանի փոխարեն

Սույն թվականի փետրվարի 10–14 Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում անցկացվելու են կրթահամալիրի կառավարման խորհրդի ընտրություններ, որի կազմում, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրության համաձայն, կարող են ընդգրկվել Ավագ դպրոց-հետազոտական վարժարանի երկու սովորողներ: Ընդունելով այս ամենն ի գիտություն՝ ես՝ Դավիթ Կարենի Մուրադյանս (ծնված 03.04.2008թ.), թվով 26 սովորողի կողմից առաջադրվել և ինքնառաջադրվել եմ որպես կրթահամալիրի կառավարման խորհրդի անդամի թեկնածու:

Սույն նախընտրական ծրագրի միջոցով ներկայացնելու եմ կրթահամալիրի զարգացման իմ տեսլականը, իմ որդեգրած հիմնական սկզբունքներն ու առաջնահերթությունները, որոնք կնպաստեն մեր կրթահամալիրի սովորողների ներդպրոցական և արտադպրոցական հնարավորությունների ընդլայնմանը, նրանց ձայնի առավել ակտիվ ներկայացմանն ու հնչեղության բարձրացմանը, ինչպես նաև կրթահամալիրի ու համայնքի փոխգործակցության և համագործակցության ամրապնդմանը:

Մեր կրթահամալիրի կառավարման խորհրդում ընդգրկվելու հնարավորությունը մեծագույն պատիվ կլինի ինձ համար, որն հստակ կարտացոլի հարազատ կրթահամալիրի նկատմամբ պատասխանատվության, նվիրվածության և հանուն համընդհանուր բարօրության և զարգացման համար ծառայել շարունակելու պատրաստակամությունը:

Կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելն ինձ համար կլինի ոչ միայն արտոնություն, այլև պարտավորություն՝ գործելու ավելի շատ և առավել ջանասիրաբար՝ կրթական միջավայրի շարունակական զարգացման, սովորողների իրավունքների պաշտպանության, նրանց ձայնի առավել հնչեղության ապահովության համար:

Կասկած չունեմ, որ համատեղ ուժերով կարողանալու ենք ստեղծել այնպիսի մի միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող հնարավորություն կունենա ազատորեն ինքնարտահայտվելու և իր ներդրումն ունենալու համայնքային զարգացման գործում:

Իմ կարգախոսն է «Հանուն կրթահամալիրի, հանուն պետության»:

Դավիթ Կարենի Մուրադյան

Ա. Կրթահամալիրի ընդհանուր կառավարում

Համաձայն «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ Կրթահամալիրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նախարարությունը, կրթահամալիրի կառավարման կոլեգիալ մարմինը՝ կրթահամալիրի խորհուրդը, (այսուհետ՝ խորհուրդ), կրթահամալիրի գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենն ու իր աշխատակազմը (այսուհետ՝ գործադիր տնօրեն):

Ընդունելով ի գիտություն վերոնշյալը՝ որպես կրթահամալիրի կառավարման խորհրդի անդամի թեկնածու ներկայացնում եմ իմ տեսլականն ու իմ քայլերը՝ ուղղված կառավարման խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը.

- Մշտական կապի մեջ գտնվել կրթահամալիրի կառավարման խորհրդի բոլոր անդամների, նախագահի հետ, կատարել մշտադիտարկում, մասնակցել հրավիրվելիք բոլոր թե՛ առկա, թե՛ վիրտուալ նիստերին, ազատորեն արտահայտել սեփական դիրքորոշումները, լինել հստակ, ակտիվ մասնակցել քննարկումներին,
- Ելնելով պայմաններից և լիազորություններից՝ առաջարկել տեխնիկա-կազմակերպչական և ոչ միայն բնույթի փոփոխություններ ու բարեփոխումներ՝ կապված կրթահամալիրի կառավարման խորհրդի գործունեության հետ՝ ի նպաստ նրա արդյունավետության բարձրացման,
- Կրթահամալիրի կանոնադրության սահմաններում՝ ծավալել և ընդլայնել համագործակցություն արտադպրոցական հասարակական և պետական կազմակերպությունների հետ՝ կառավարման խորհրդի գործունեությունն ավելի

բազմակողմանի դարձնելու և կրթահամալիրի կրթական միջավայրին դրականորեն ազդելու համար,

- Սեփական դիրքորոշումներում և հայտարարություններում կապված կրթահամալիրի և նրա կառավարման հետ, խորհրդի նախագահ կամ անդամ ընտրելիս, նախարարության սահմանած մրցույթի անցկացման կարգի համաձայն կրթահամալիրի գործադիր տնօրեն ընտրելիս, աշխատակարգն հաստատելիս, առաջարկներ ընդունելիս և կանոնադրությամբ պայմանավորված այլ գործառույթներ իրականացնելիս առաջնորդվել բարեխղճությամբ, արդարադատությամբ, սեփական համոզմունքներով, լինել անկախ, անկեղծ, անաչառ և պատասխանատու կայացված բոլոր որոշումներում,
- Կառավարման խորհրդի նիստերի վերջում ընդունված արձանագրությունների հիման վրա կատարել վերլուծություններ, գրառել առաջարկություններ և դրանք ներկայացնել խորհուրդ,
- Անընդհատ և անդադար կապի մեջ գտնվել կառավարման խորհրդի հետ անուղղակի և ուղղակի առնչություն ունեցող անձանց, սովորողների, լիազորված մարմինների, դասավանդողների, կրթահամալիրի աշխատակիցների հետ, լսել նրանց հուզող հարցերն ու հնչեցնել պատասխաններ՝ կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում,
- Խորհրդի աշխատանքներից դուրս պարբերաբար քննարկումների ընթացքում առաջ քաշված, բարձրաձայնված առավել կարևոր առաջարկները ենթարկել բազմակողմանի վերլուծության, վերհանել առավելություններն ու թերությունները, հետագայում ներկայացնել խորհրդի քննարկման,
- Լինել պրոդուկտիվ և աշխատել ջանասիրաբար, հավատարիմ լինել կրթահամալիրի և սեփական արժեքներին,
- Գործել հանուն համընդհանուր բարօրության և բարեկեցության՝ ի նպաստ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և Հայաստանի Հանրապետության:

Բ. Կրթական միջավայրի զարգացում

Համաձայն «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48 կետի «է» ենթակետի, այն է՝ «խորհուրդը կրթահամալիրի գործունեության առարկային, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում նախարարությանը, մասնաժողովի ներկայացմամբ հաստատում կրթահամալիրում իրագործվող ծրագրերը, հետազոտական և մեթոդական աշխատանքների թեմաները, մասնաճյուղերի ուսումնական պլանները»՝ կառավարման խորհրդի անդամի լիազորությունների շրջանակներում պատրաստակամություն եմ հայտնում.

- Աշխատանքային քննարկումների ընթացքում պարբերաբար հանդես գալ ելույթներով, հայտարարություններով և առաջարկներով՝ ուղղված կրթական միջավայրի, ուսումնական պրոցեսի բարելավմանը, նորարարական մեթոդների կիրառությանը՝ ուսուցումն ավելի ինտերակտիվ, հետաքրքիր և բոլորի համար հասանելի դարձնելու նպատակով,
- Կրթահամալիրի տարատարիք սովորողների հետ կիսվել մեկնարկած նոր նախագծերով, նրանց նպատակներով և խնդիրներով, պարզաբանումներ տալ կապված յուրաքանչյուր հարցի հետ, ուսումնական հարթակում ներկայացնել ընթացիկ ծրագրերի արդյունքներ,
- Ամսեկան կտրվածքով ունենալ տարաբնույթ հանդիպումներ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների հետ՝ ուսումնական պրոցեսին և կրթական միջավայրին վերաբերող խնդիրները քննարկելու, պարզելու, նրանց անհրաժեշտ լուծման

տարբերակները վերհանելու և հետագայում կառավարման խորհուրդ ներկայացնելու նպատակով,

- Ընդլայնել տարբեր ոլորտների մասնագիտական դասընթացները, վարպետաց դասերը և վերապատրաստումները՝ նպաստելու համար սովորողների մասնագիտական կողմնորոշման և հմտությունների զարգացմանը,
- Ընդլայնել կլոր սեղան-քննարկումների թեմատիկան՝ այն բազմազանեցնելով և ներգրավվելով տարբեր ոլորտների մասնագետների՝ այդ կերպ զարգացնելով փոխգործակցությունը, կրթահամալիրի ճանաչելիությունը, ձեռք բերել գործընկերներ,
- Խթանել դպրոցի համագործակցությունը կրթական այլ հաստատությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և ոլորտի մասնագետների հետ՝ սովորողներին նոր գիտելիքներ, փորձի փոխանակման հնարավորություններ և խորհրդատվություն տրամադրելու նպատակով,
- Ընդլայնել համագործակցությունը պետական կառույցների և կազմակերպությունների, գիտահետազոտական կենտրոնների հետ՝ ապահովելով փոխադարձ շարունակական այցեր, գիտելիքի փոխանակում, գործունեության հետ ծանոթացում, մասնագիտական կողմնորոշման հարցում սովորողներին աջակցության տրամադրում և խորհրդատվություն,
- Հետևել տարատեսակ կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների ի կատար ածումը,
- Կրթահամալիրի համաձայնությամբ՝ ստեղծել նոր կառույցներ՝ աշակերտական խորհուրդներ, որոնք կիրականացնեն մշտադիտարկում, վեր կհանեն կրթական միջավայրին վերաբերող խնդիրները և կներկայացնեն խորհուրդ,
- Ամեն կերպ խրախուսել կրթական միջավայրի մասնակիցների, հատկապես՝ սովորողների ներգրավվածությունը համայնքային զարգացման նախաձեռնություններում և ծրագրերում, խթանել ակտիվ մասնակցությունը, նպաստել սովորողների առաջադիմությանը:

Գ. Սկզբունքներ և առաջնահերթություններ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում սովորելու ընթացքում որդեգրել եմ մի շարք արժեքներ, սկզբունքներ և առաջնահերթություններ, որոնք մինչ օրս մնում են անփոփոխ և կառավարման խորհրդում ընդգրկվելու պարագայում ևս շարունակելու եմ առաջնորդվել իմ որդեգրած սկզբունքներով, արժեքներով և առաջնահերթություններով: Ստորև ներկայացնում եմ դրանք.

- Հարգանք դիմացինի, նրա արժանապատվության, այլոց կարծիքի և դիրքորոշման նկատմամբ,
- Հայրենասիրություն, «ամենից առաջ ժողովուրդն ու պետությունը» սկզբունք,
- Համընդհանուր շահի գերադասում անձնականից,
- Որևէ խտրականության բացառում,
- Արդարություն, արդարադատություն, հավասարություն, հավասար հնարավորություններ,
- Պատասխանատվություն և առաջնորդություն,
- Համագործակցություն, փոխգործակցություն և ակտիվ մասնակցություն,
- Թափանցիկություն և հաշվետվողականություն,
- Իրավագիտակցություն և «պատասխանատու քաղաքացի» գիտակցություն:

Այսպիսով, պահպանելով վերը շարադրված արժեքներն ու սկզբունքները՝ փորձելու եմ ներդնել յուրաքանչյուր ջանք՝ կառավարման խորհրդի անդամին վերապահված, կանոնադրությամբ պայմանավորված լիազորությունների սահմաններում, նախընտրական ծրագրում ներառված կետերը կյանքի կոչելու համար:

Խոստանում եմ լինել արդար, մտածել ու գործել անկախ, լինել վճռական, թափանցիկ, հաշվետու, ռացիոնալ, պատասխանատվության մեծ զգացումով գործել «Հանուն կրթահամալիրի, հանուն պետության» սկզբունքով:

Շնորհակալություն ուշադրության համար:

Իմ ինքնակենսագրականը (CV)

Իմ ուսումնական բլոգը

Հարգանքով ձեր՝
Դավիթ Մուրադյան